ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.08.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/220

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Մ. Եսայանի (լիազորագիր՝ տրված 19.08.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2021թ. թիվ 26/26-1/12962-2021 գրությամբ «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ, «Այթիռեսուրսիս» ՍՊ, «Լեմուր» ՍՊ ընկերություններին, Ա/Ձ Ջանիկ Սևոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 07.08.2021թ. թիվ ՊԵ/112-21 գրության հիման վրա 13.08.2021թ. թիվ 26/26-1/12962-2021 գրությամբ նախաձեռնել է «Վեբէքս Թեքնոլոջիս»

ՍՊ, «Այթիռեսուրսիս» ՍՊ, «Լեմուր» ՍՊ ընկերություններին, Ա/Ձ Ջանիկ Սևոյանին (հետայսու նաև՝ Մասնակիցներ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Մասնակիցների կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Մասնակիցները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/220 ընթացակարգի շրջանակներում 20.08.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը, ինչպես նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ վերջիններիս կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել, բացառությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի:

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը մասնակցել է հրավիրված նիստին և մասնավորապես հայտնել, որ «ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2021/1» գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, չէր կարող կիրառվել անհամապատասխանությունների շտկման պահանջ, քանի որ տվյալ գնման ընթացակարգով նման կարգավորումներ նախատեսված չեն:

3. <u>«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ»-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրություններով ներկայացնելով պահանջվող փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից 2021 թվականի հուլիսի 1-ին հրապարակվել է ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2021/1 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել 2021 թվականի հուլիսի 8-ին:

Ս.թ. հուլիսի 9-ին գնահատող հանձնաժողովի կողմից ծանուցում էր ուղարկվել մասնակիցներին շտկել անհամապատասխանությունը: Մինչև սահմանված

վերջնաժամկետը Ջանիկ Սևոյան ԱՁ-ն և Այթիռեսուրսիս ՍՊԸ-ն ուղարկել էին պատասխան նամակ:

Գնահատող հանձնաժողովի կողմից որոշվեց կասեցնել գնահատման նիստը՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և լրացուցիչ հարցումներ կատարելու համար:

Այթիռեսուրսիս ընկերությունը ներկայացրել է վերջին 3 տարիների ընթացքում իրականացված ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկատվություն, ինչը չէր բավարարում մրցութային հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (այսուհետ՝ հրավեր) սահմանված պահանջներին:

Ջանիկ Սևոյան ԱՁ-ի կողմից ներկայացվել են՝

1. ա) issue.com/htatos/docs/atosbook_h.tadevosyan հղումով ստեղծագործությունների ալբոմը,

բ) Հավելված 2-ում նշված պայմանագրի իրականացված «համացանցի կամ ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համար սերվերային հավելում մշակման ծառայությունները»,

գ) demirchyanhall.sevuni.su տոմսերի վաճառքի առցանց համակարգը,

դ) http://www.cesa.am. http://www.alpa.am, http://www.hayernaysor.am. http://www.annahakobyan.am, http://www.diasporabook.am կայքերը:

Վերոնշյալ կետերը չեն բավարարում հրավերով սահմանված հետևյալ պահանջին՝ «Հայտ կարող է ներկայացնել այն ընկերությունը, որը մասնագիտացված է արվեստի կառույցների կարիքների համար ծրագրավորում իրականացնելու ոլորտում, ինչպես նաև կարող է ներկայացնել արվեստի կայքերի ընդգրկուն պորտֆոլիո», քանի որ տվյալ պահանջով հայտ կարող է ներկայացնել միաժամանակ նշված 2 վավերապայմանները բավարարող կազմակերպություն:

2. Տոմսերի վաճառքի համար նախատեսված կամ վարչական հատվածի համար նախատեսված բովանդակությամբ կայքի Կոնցեպտ:

Վերոնշյալ կետը չի բավարարում հրավերով պահանջվող հետևյալ պահանջին՝ «Կազմակերպությունները պետք է ներկայացնեն, թե ինչ են կոնցեպտով են ստեղծելու թանգարանի կայքը»:

3. Արժանահավատ չեն ներկայացված 3 կայքերը՝ http://www.artg.sevuni.su. http://www.mm.sevuni.su, htitp. l/www.ma.sevuni.su, որոնք ներկայացված են որպես

շոշափելի օրինակներ կայքերի ընդգրկուն պորտֆոլիոյի և կայքեր ստեղծելու միջազգային փորձի մասին:

Կազմակերպության կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որ նշյալ կայքերի ստեղծման գործընթացում դիմողը ներգրավված է եղել: Միաժամանակ, նշված կայքերի ուսումնասիրությունից, և հաշվի առնելով օրենքի պահանջը, հետևում է, որ նշված կայքերի ստեղծման հեղինակային իրավունքը պատկանում է այլ կազմակերպությանը: Դրանք ներկայացնում են կանադական 3 թանգարանների կայք-էջերը, որոնք ունեն պաշտոնական էջեր՝

http: //www.abbozzogallery.com http://www.moca.ca http://www.mcmichael.com:

Հայտերի գնահատման նիստի արդյունքում Վեբէքս Թեքնոլոջիս ՍՊԸ-ի, Այթիռեսուրսիս ՍՊԸ-ի, Լեմուր ՍՊԸ-ի և Ջանիկ Սևոյան ԱՁ-ի հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ սահմանված կարգով ընթացք տալու համար:

Կից ներկայացվում է հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության, մասնակիցներից ուղղված ծանուցումների պատճենները և պատասխանները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/220 ընթացակարգի շրջանակներում 20.08.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/220 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/220 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի կարիքների համար կայքի արդիականացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2021/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Արտ Սխեմա» ՍՊ, «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ, «Այթիռեսուրսիս» ՍՊ, «Լեմուր» ՍՊ ընկերությունները և Ա/Ձ

Ջանիկ Սևոյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.07.2021թ. թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը.

«Բացի «Արտ Սխեմա» ՍՊԸ-ից, Մասնակիցները հայտով չէին ներկայացրել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ս.թ. հուլիսի 9-ին գնահատող հանձնաժողովի կողմից ծանուցում էր ուղարկվել Մասնակիցներին՝ շտկել անհամապատասխանությունը: Մինչև սահմանված վերջնաժամկետը Ջանիկ Սևոյան Ա/Ձ-ն և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն ուղարկել էին պատասխան նամակ:

Գնահատող հանձնաժողովի կողմից որոշվեց կասեցնել գնահատման նիստը՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և լրացուցիչ հարցումներ կատարելու համար»:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 09.07.2021թ. Մասնակիցներին ներկայացրել է ծանուցում՝ հետևյալ բովանդակությամբ.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ԿԳՄՆՍ նախարարության «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2021/1 ծածկագրով գնանշման հարցման (այսուհետ՝ մրցույթ) հայտերի բացումը տեղի է ունեցել սույն թվականի հուլիսի 8-ին:

Ձեր կազմակերպության կողմից ներկայացրած հայտի մեջ բացակայում է մրցույթի փաթեթով պահանջվող հետևյալ տեղեկատվությունը՝

-Սույն մրցույթին կարող են մասնակցել ծրագրավորման այնպիսի ընկերություններ, որոնք մասնագիտացված են արվեստի կառույցների կարիքների համար ծրագրավորում իրականացնելու ոլորտում, ինչպես նաև կարող են ներկայացնել արվեստի կայքերի ընդգրկուն պորտֆոլիո: Կազմակերպությունները պետք է ներկայացնեն, թե ինչ կոնցեպտով են ստեղծելու թանգարանի կայքը: Կազմակերպությունները պետք է ունենան արվեստի կառույցների հետ աշխատելու ու կայքեր ստեղծելու միջազգային փորձի մասին հիմնավորումներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետի՝ խնդրում ենք մինչև 2021թ. հուլիսի 13-ը ժամը 14:00-ն շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը և բացակայող փաստաթղթերը ուղարկել sedrakyanlilit@gmail.com էլեկտրոնային փոստին

կամ առձեռն ներկայացնել Արամի 1 հասցեով, հակառակ դեպքում՝ համաձայն նույն կարգի 42-րդ կետի Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի»:

4. Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 42-րդ կետով, գնահատել անբավարար և մերժել «ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2021/1» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ, «Այթիռեսուրսիս» ՍՊ, «Լեմուր» ՍՊ ընկերությունների և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի հայտերը:

5. «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.08.2021թ. թիվ ՊԵ/112-21 գրությամբ տրամադրել է Մասնակիցների կողմից Ընթացակարգի շրջանակներում հայտերով ներկայացված փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրում է, որ առկա են հետևյալ փաստաթղթերը.

«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ՝ Ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի և գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի,

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ՝ հավելված N 1 և հավելված N 2,

«Լեմուր» ՍՊԸ՝ հավելված N 1 և հավելված N 2,

Ա/Ձ Ջանիկ Սևոյան՝ հավելված N 1 և հավելված N 2:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.08.2021թ. թիվ 26/26-1/12962-2021 գրությունը, «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի 07.08.2021թ. թիվ ՊԵ/112-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին գլխի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ

և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում ***մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման

ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է, որ Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով սահմանված կարգով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն **հավելված N 1-ի**.

2.2 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.3 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

2.5 գնային առաջարկ՝ համաձայն **հավելված N 2-ի**:

Այսպես, «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի կարիքների համար կայքի արդիականացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2021/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արտ Սխեմա» ՍՊ, «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ, «Այթիռեսուրսիս» ՍՊ, «Լեմուր» ՍՊ ընկերությունները և Ա/Ձ Ջանիկ Սևոյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.07.2021թ. թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը.

«Բացի «Արտ Սխեմա» ՍՊԸ-ից, Մասնակիցները հայտով չէին ներկայացրել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ս.թ. հուլիսի 9-ին գնահատող հանձնաժողովի կողմից ծանուցում էր ուղարկվել Մասնակիցներին՝ շտկել անհամապատասխանությունը: Մինչև սահմանված վերջնաժամկետը Ջանիկ Սևոյան ԱՁ-ն և Այթիռեսուրսիս ՍՊԸ-ն ուղարկել էին պատասխան նամակ:

Գնահատող հանձնաժողովի կողմից որոշվեց կասեցնել գնահատման նիստը՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և բացուցիչ հարցումներ կատարելու

համար»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 09.07.2021թ. Մասնակիցներին ներկայացրել է ծանուցում՝ հետևյալ բովանդակությամբ.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ԿԳՄՆՍ նախարարության «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2021/1 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացումը տեղի է ունեցել սույն թվականի հուլիսի 8-ին:

Ձեր կազմակերպության կողմից ներկայացրած հայտի մեջ բացակայում է մրցույթի փաթեթով պահանջվող հետևյալ տեղեկատվությունը՝

-Սույն մրցույթին կարող են մասնակցել ծրագրավորման այնպիսի ընկերություններ, որոնք մասնագիտացված են արվեստի կառույցների կարիքների համար ծրագրավորում իրականացնելու ոլորտում, ինչպես նաև կարող են ներկայացնել արվեստի կայքերի ընդգրկուն պորտֆոլիո: Կազմակերպությունները պետք է ներկայացնեն, թե ինչ կոնցեպտով են ստեղծելու թանգարանի կայքը: Կազմակերպությունները պետք է ունենան արվեստի կառույցների հետ աշխատելու ու կայքեր ստեղծելու միջազգային փորձի մասին հիմնավորումներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետի՝ խնդրում ենք մինչև 2021թ. հուլիսի 13-ը ժամը 14:00-ն շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը և <u>բացակայող փաստաթղթերը</u> ուղարկել sedrakyanlilit@gmail.com էլեկտրոնային փոստին կամ առձեռն ներկայացնել Արամի 1 հասցեով, հակառակ դեպքում՝ համաձայն նույն կարգի 42-րդ կետի Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի»:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 42-րդ կետով, գնահատել անբավարար և մերժել «ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2021/1» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ, «Այթիռեսուրսիս» ՍՊ, «Լեմուր» ՍՊ ընկերությունների և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի հայտերը:

«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.08.2021թ. թիվ ՊԵ/112-21 գրությամբ տրամադրել է Մասնակիցների կողմից Ընթացակարգի շրջանակներում հայտով ներկայացրած փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն

արձանագրում է, որ առկա են հետևյալ փաստաթղթերը.

«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ՝ Ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի և գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի,

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ՝ հավելված N 1 և հավելված N 2,

«Լեմուր» ՍՊԸ՝ հավելված N 1 և հավելված N 2,

Ա/Ձ Ջանիկ Սևոյան՝ հավելված N 1 և հավելված N 2:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Մասնակիցների կողմից հայտերով ներկայացվել են Ընթացակարգի հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ ղեկավարվելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ «ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2021/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավասու չէր սույն մասով Մասնակիցների հայտերում արձանագրելու հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն ու Կարգի 41-րդ կետի հիմքով նիստը կասեցնելու և Մասնակիցներին ծանուցելու՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը **բացակայող փաստաթղթերն** ուղարկել sedrakyanlilit@gmail.com էլեկտրոնային փոստին կամ առձեռն ներկայացնել Արամի 1 հասցեով, այնուհետև՝ ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում Կարգի 42-րդ կետի պահանջով Մասնակիցների հայտերը անբավարար գնահատելու և մերժելու:

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ տվյալ դեպքում Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում առաջացած բացասական հետևանքները հնարավոր չէ վերագրել Մասնակիցներին որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա չեն վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2021թ. թիվ 26/26-1/12962-2021 գրությամբ «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ, «Այթիռեսուրսիս» ՍՊ, «Լեմուր»

ՍՊ ընկերություններին և Ա/Ձ Ջանիկ Սևոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**